



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

шумар

1, 434

39

1999

~~Л. 200~~ № 314
200 Год списку читалъ
А. Курас
г. Тифлис 1888 г.
Г. С. Симонов
ՄԱԼԻԿՆ ԱՐՏԻՎՈՅ

(Պատմական վրոյ)

443.

Ճ Ռ Ւ Շ Ի

Տպարան Հայոց Հոգեւոր Տևարժեան:

1888

Արքա Տիգրան

卷之三

113-15159

የኢትዮጵያ ሚኒስቴር

(*gymnop. suspicuum*)

Дозволено цензурою 13 Апреля
1888 г. Г. Тифлисъ

*Типо-скоропечатня Шушин. Армян.
Духовн. Въдомства.*

๘๙๕

ՆՐԻԿՐՈՒՄ ԵՄ ՂԱՐԱԲԱԴԻ ՀՈԴԵԿՈՐ ՊՊՐԱՆՈՅԵ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ



ՄԱՆՈՒԿՆ ԱՐՏԱՒԱԶԴ

Դարձնանային առաւօտ էր. անտառի քա-
մակից արդէն դուրս էր եկել արեգակը
և աստղածել իւր ոսկեփայլ ձառագայթ-
ները Բագուան աւանի*) շըջակայքը. Արե-
մատեան կրզմում բարձրանումէին խոտա-
ւէտ սարերը, որոնց վրայ հեռուից կարե-
լի էր նկատել ոչխարների հօտերը, փռու-
ած սպիտակ սաւանների նման. Գէպի
հարաւ հստում էր Եփրատը, Հայաստանի
Ալիսաւոր գետերից մէկը, որի խոռվ վշշոցը
լսելի էր լինում հեռու տեղից. Գետի
ջուրն այս անգամ առաւել առատ էր և

*) Այժմեան Ուշքիւ իսայի ս. Յովհաննու վանքն է:

28-1

1-89

մի փոքր դուրս էր եկել ափերից, որովհետև
առ Ապրիլ ամսուայ վերջն էր և դեռ
տեղ տեղ սարերի գագաթներից հալուամ
էին ձիւները և թափւում բազմաթիւ
բարակ առուներով մեծ գեար: Քանի
աքրից հեռանում էր նփրատը, այնքան
առաւել նրա ջրերը շողազում էին: Դէ-
սի հիւսիս-արևմուսք եթէ դարձներու
լինենք մեր հայեացքը, կարելի կը լինէր
նշմարել զանազան տեսակ շէնքերի կոյտեր,
—այդ ջարեհաւանդ քաղաքի աւերակ-
ներն էին: Բագաւանի արևմտեան կողմում,
նփրատի ափերին մէկ փոքր բլուրի վրայ
տարածուած էին Հայոց զօլքերի վրանները:

—Վիտէք ինչ կայ, եղբայրներ, դար-
ձաւ մի նորեկ շինական շտապով
և խորհրդաւոր կերպով զինուոր-
ներին, ես գալիս եմ Կող գաւառից, այն-
տեղ են եկել հասել թշնամիները, ես

իմացայ, որ դրանք պարսիկներ են և գա-
լիս են մաշի տարած Մելուժանի հետ
մեր զօրավարների դէմ: Ես հազիւ կարո-
ղացայ պրծնել անիծածների ձեռքից,
շարունակեց վրդոված շինականը, իմ
ընկերներից շատերի զուլաները թակել տը-
ւեց, մինչև անգամ մէկին ձամբի վրայ
կիսամեռ թողին:

—Պատճառն ինչ է, հարցրին մեծ հե-
տաքրքութեամբ զանազան կողմերից
զինուորները:

—Ենդուր համար, որ մենք նրան
ասացինք թէ Բագաւան աւանի ձանա-
պարհը նղջերք սարի վրայովն է, որ ինչպէս
ձեղյայտնի է շատ գժուար ձանապարհ է:
—Բա հիմայ ուր կրինի հասած թշնա-
մին, ինչ ես կարծում հարցրին մի քա-
նիմները:

—Տօ, դո՞ք ձեր ձալը տեսէք, բարկա-

յած ասաց շինականը, ով է իմանում,
Աստուած է գիտում:

Սյս խօսքերից յետոյ զինուորների մէջ
մեծ խառնակութիւն տիրեց, նրանք սկսե-
ցին իրարանցով ընկներ, մէկը միւսին չա-
փազանցրած հաղորդել լսած լուրը:
Նատերին լուրը ձնշել և յուսահատու-
թեան մէջ էր ձգել, բայց կային և այն-
պիսիները որոնք բոռնցքները կամ ձեռ-
քերին ունեցած զէնքերը բարձրացնելով
ազազակներ էին հանում, ասելով, այ, ա-
նօրէն Մերուժան, թէ մի մեր ձանկը
կրնկնես, քո կոնծկոնծալդ մէնք շանց
կըտանք:

— Տէր Աստուած, դու լինիս մեզ օգնա-
կան, ասում էին զօրքի մէջ դանուող հո-
գեղորականները:

Սյս ընդհանուր շփոթի մէջ մոռացել
էին լուրը յայտնել իրանց զօրավարին,

որ այդ ժամանակ վրաններից մի քանի
մշոն հեռու գտնուող գիւղումն էր:
Նրանք երբ զլիսի լնկան, իսկոյն և եթ-
երկու սուրհանդակ ուղարկեցին զօրա-
վարի մօտ:

Բայց ով էր արդեօք Մերուժանն և ի՞նչ
պատճառով էր եկել Հայոց աշխարհի
վերայ կոխւ: Մերուժանը Հայոց Արծրու-
նեաց մեծ իշխաններիցն էր, ուրացել էր
քրիստոնէական հաւատը և անցել պար-
սից կողմը, ընդուներով կուապաշտութիւն-
նա արեգակը ծմարիտ Աստուծոյ տեղ
էր ընդունում: Ինչպէս պարսիկները
Պարսից նապուհ զօրեղ թագաւորը խոս-
տացել էր Մերուժանին հայերի վրայ
թագաւոր կարգել եթէ միայն նա կարո-
ղանար Հայերին կրօնափոխ անել և
դարձնել պարսից սուտ հաւատին: Այս
անօրէն Մերուժանը ամենացն բան դորձ-

էր գնում, որ հայերը թողնեն Քրիստոսի
առաք հաւատը, հայոց նախարարներին
բռնում էր բանտ նստացնում, հայոց եպիս-
կոպոսների և քահանաների վրայ հարկեր
էր գնում և շատերին Պարտկաստանի հե-
ռաւոր տեղերն էր ուղարկում հրամայում
և ստիպում էր, որ հայերը միայն պար-
սից լեզուն սովորեն, աշխատում էր ամե-
նայն կերպ հայերի ծանօթութիւնը և
մտերմառթիւնը կտրել յոյներից, որտոց
հետ լաւ էին հայերը իբրև երկու դրա-
ցի քրիստոնեայ ազդեց: Մեր երկում
քանդեր աւելիել էր տալիս սուրբ տաճար-
ները և եկեղեցիները և նրանց տեղը
շինել տալիս ատրուշաններ (կրտական-
ներ): Պարսից հոգեորականները (մոգերը)
ստիպում էին հայ ժողովնդին կուռքեր
պաշտել և զոհ մատուցանել նրանց:

Այսպիսի և սրա նման շատ միջոցնե-

րով Մերուժանը նեղում էր հայ ժողովը՝
դիմ, որ ուրանայ իւլ ծշմալիտ հաւատը,
բայց ժողովուրդը չուրացաւ, հաստատուն
մնաց այն առաքելական քարոզներին, որ
արել էին ս. Բարթողիմէոս և Թաղէոս
առաքեալները, ս. Գրիգոր Լուսաւորիչը
Մեծն Ներսէսը և ուրիշ հոգեորականները
Վերջին անգամ պարսից թագաւորը
կամեցաւ զէնքի միջոցով կրկին փորձ փոր-
ձել կոապաշտութիւնը տարածել մեր երկ-
րում նա իր չար մտադրութիւնը իրու-
գործելու համար ժողով եց բազմաթիւ
զօրք, յանձնեց Մերուժանին, որ սա զայ
մեր երկրի վրայ: Մերուժանը մեծ վստա-
հութիւն ուներ իւր վրայ. նա պարծենա-
լով խոստացաւ նապուհին կամ կենդանի,
բռնած բերէնրա առաջ հայոց զօրավարին,
կամ նրա կարած զլուխը: Ահա այս էր
պատճառը, որ Մերուժանը եկել մտել էր

Հայոց երկիրը: Նա անարդել ամեն կողմեռում իր չարագրածութիւնները կատարելով, գալիս էր, որ Մամիկոնեան Մանուկ զօրավարի երկրումնոյնպէս ստիպէ Հայերին իրանց ու հաւատն ուրանաբ:

Բ

Այս ժամանակներում, այսինքն սրանից մօտ 1400 տարի առաջ, Հայաստանում թագաւոր չկար և մեր երկիրը կառավարում էր Մանուկը, Մամիկոնեան իշխաններից ամենադիմաւորը և զօրեղը: Մանուկը կոչւում էր սպարապետ, այսինքն գրւխաւոր զօրավար: Նա առաջնորդում էր ազգը և բոլոր Հայ նախարարների գլխաւորն էր:

Նա մեծ իմաստութեամբ եյաջողութեամբ կառավարում էր երկիրը և քանի որ կենդանի էր, Հայ ժողովրդին ամեն ջանքով պաշտպանում էր պարսից Հայածանքների գէմ:

Մանուկը սպարապետը իւր պարատում պահում էր արգէն վախճանուած Պապ թագաւորի ընտանիքը, նրա կնոջը, թագուհի Զարմանդուխախն և երկու թագաժառանգ որդեկերանց Արշակին և Վաղարշակին, որոնց սոփորեցնում և կրթում էր, որպէս զի մեծանալով կարողանան լաւ կառավարել Հայոց երկիրը: Մանուկի պալատի կրշտին միշտ բնակւում էր իւր ազգական Վաչէ Մամիկոնեանը, որ իւր նշանակութեամբ Հայոց երկրում Մանուկից յետոյ առաջին տեղն էր բոնում: Այս Վաչէն ունէր մի երեխայ, Արտաւազդ անունով, որ Համարեա՛ իւր բոլոր ժամանակն անց էր կացնում Մանուկի տանը: Մանուկը նըրան այնշափ էր սիրում, որչափ իւր որդիներին և թագաժառանգ Արշակին և Վաղարշակին: Նա միակերպ հոգս էր քաշում այս երեք երեխանց վրայ և աշխատում

էր, որ պիտանի մարդիկ դուրս գան ժամանակով, երեքին էլ սովորեցնում էր զրագիտութիւն և հայոց պատմութիւն։ Վաչէն էլ էր աշխատում երեխաների կրթութեան վրայ, միայն թէ սա առաւել մարմնամարդութեամբ էր պարապում նրանց հետ. նա սովորեցնում էր թէ ինչպէս պէտք է զինաւորուել վահան բռնել և նիզակ խաղացներ ցոյց էր տալիս նետաձգութեան և ձիարշաւութեան կանոնները և ինքն երբեմն սպառազինուած անձամբ խաղ էր անում երեխաների հետ, որոնցից իւրաքանչերն ուներ իւր համար ամէն մի հարկաւոր բան, որ գործ էր ածւում պատերազմի մէջ։

Պէտք է ասել որ Արտաւազդը իւր հօր տուած դասերը աւելի էր սիրում, քան թէ Մանուկինը, իսկ Արշակն և Վաղարշակն ընդհակառակը։ Պատերազմական խա-

դերը կազդուրել էին Արտաւազդի մարմննը և զարգացրել նրա սիժերը, այնպէս որ երբեմն խաղալու ժամանակ նա վեր էր առնում իւր ընկեր երկու եղբօրն ևս, իւր տակը կոխում ու լայացնում, թեպէտ Արշակը նրանից տարի ու կէտով մէծ էր։ Սյս էր պատճառը, որ երկու եղբայրը մի փոքր չէին սիրում Արտաւազդին։

Այն օրը, երբ Մերուժաննը մտել էր Տամիկոնեան նախարարութեան սահմանները, Մանուկը սրահում թեք ընկած բարձերի վրայ պարապում էր երեխաների հետ։

—Քո պապի անունն ի՞նչ էր, կարո՞ղ ես ասել հարցըրեց սպառապետն Արշակից։

Քանի որ սա մտածում էր պատասխանելու, փոքր եղբայրը վրայ պրծաւ և բարկանարով եղբօր վրայ, ասաց։

—Դեռ մտածում էլ է, չն օրը չ' ասել մեզ

ապին: — Քո անունն ի՞նչ է, շարունակեց նա: :

— Արշակ, ցածր ձայնով ասաց մեծ եղբայրը:

— Նրանն էլ էր Արշակ, պատասխանեց կտրողական կերպով Վաղարշակը:

— Ներսէս մեծն ի՞նչպէս էր դալիս Գրիգոր Լուսաւորչն, կարո՞ղ էք ասեր Հարցրեց կրկին Մանուկը:

— Ես զիտեմի բացականչեց Արշակը, — մեր կաթողիկոսն էր:

— Եգորէս չի, կարեց նրան Վաղարշակը նա Լուսաւորչի թոռան թոռն էր:

— Նատ յաւ, շատ յաւ, ասաց Մանուկը, շիելով Վաղարշակի վուխը:

— Սյդ ոչինչ այդ լսիի մի զիտութիւն չի, մէջ մոտաւ Արաւա ազդը՝ դուք թէ կարող էք, ասացէք, դարձաւ նա երկու եղբայրներին, քանի՞ անդամ Վաղբայրներին:

միկօնեանը ջարդ ու փշուր է արել պահակից զօլքերին և քանի անդամ անօս լէն Մերուժանը ազատուել է նրա ձեռքից: Դուք պարձենում էք ձեր հայր Պապ թագաւորով և ձեր պապելով, բայց իմ հայրս ինձ ասել է, որ եթէ մեր Մամիկոնեան ցեղը ըլինէր, Հայոց թագաւորները չէին կարող ընդդիմանալ պարմից հարուածներին:

Յեայ Արտաւազդը մի առ մի սկսեց պատմել Վասակի, Սուշեղի և ուրիշ Մամիկոնեանների արտօն քաջադործութիւնները: Երկու եղբայրը զարմացած լսում էին նրան, իսկ Մանուկը անդադար ժըպտում էր: նա շատ ուրախ էր, տեսնելով այս փոքր երեխային, որ ողեռուած պատմում էր իւր ցեղի մատուցած ծառայութիւնները: Հայոց ազգին և թագաւորներին: Դեռ Արտաւազդը չէր զեր-

ջացը իւր պատմութիւնը, որ ներս մը-
տաւ մի սուրհանդակ և դռան մօտ
կանգնած, խոնարհ զլուխ տալրփ, ասաց:
— Տէր, Կոդ գաւառից մարդ է եկեր,
ասում է, որ պարսից զօրքը Մերուժա-
նի առաջնորդութեամբ կրկին մտել է
մեր սահմանները:

Սպարապետը մի քանի ուրիշ հարցերի
մասին տեղեկութիւն ստանալուց յետոյ,
լրաբերին ասաց ո բարւոք է և այս
զերծինը նորից զլուխ տալրփ գուրս եկաւ:
Մանուէլը արձակեց երեխաններին ասե-
լով. ո գնացէք խաղ արէք և, իսկ ինքը
մի քանի թիկնապաշներին պատուիրեց,
որ գնան մօտակայ զիւղերը և ցրուած
դինուորներին ժողովեն վրանների մօտ,
որտեղ գտնւում էր հայոց զօրքի զլիա-
ւոր բանակը:

Այս առաջին անգամը չէր, որ սպա-

րապետը պէտք է պատերազմէր պարսից
դէմ, պրանից առաջ մի քանի անգամ
նա յաղթել էր նոյն իսկ Մերուժանին և
այս անգամ էլ նշնուպէս մեծ յըս ունէր
յաղթելու, սրա համար էլ սուրհանդակի
բօթաբեր լուրը նրա վրայ մեծ ազգե-
ցութիւն չունեցաւ: Եյսուամենայնիւ
նա իւր մօտ կանչեց Վաչէին և սկսեցին
երկսով խորհուրդ անել թէ ովն է լաւ,
արդեօք բոլոր զօրքով գնան յարձակուին
Մերուժանի վրայ, քանի դեռ նա ճանա-
պարհին է, թէ ամբողջ բանակով սպա-
սեն թշնամուն, որ նա գայ և ապայետ
մէին նրա յարձակումները Վաչէն աւելի
յարմար էր գտնում իրազործել առաջին
միտքը, որպէս զի թշնամին ժամանակ
չունենայ հանգստանալու ճանապարհին
կրած նեղութիւններից, իսկ սպարապետը
մտադիր էր սպասել թշնամու գալուն:

Արեգակը արդէն մայլը մտնելու վրայ
էր, որ մի նոր սուրհանդակ յայտնեց
Սանուելին թէ պարսիկները արդէն բա-
գուան աւանի սահմաններն են մտել և
կանգ առել նիրատի ափի մօա:

Որոշուեցաւ միւս օրը յարձակուել թշ-
մու վրայ:

Ք

Նրեխանները գուրս էին եկել սպարա-
պետի մօտից, բայց խաղը զուխ չէր
գալիս, երեւումէր, որ սուրհանդակի յայտ-
նած լուրջ դասի ժամանակ փոքր ի շատէ
ազդել էր նրանց վրայ: Արշակը վաղար-
շակը վախի մէջ էին ընկել և իրանց
հասկացողութեան համեմատ դատողու-
թիւններ էին անում, թէ ինչպէս պէտք
է թաղչեն Մերուժանից, եթէ որ նա
վայ յարձակուի իրենց աւան վրայ:

— Արշակ, դարձաւ կլասեր եղբայրը

մեծին, ես մեր վիճականութիւն եմ թագ
կենալու, որ չբոնեն ինձ թշնամիներու:
— Իսկ ես մառանի մէծ պըտիհանում
որտեղ քաղցրեղէններ են դրած:
— Դու ուր ես փախէլու, դարձան
համարեա միաձայն երկու եղբարքն ևս
Սրբուազդ մանուկին, որ թէպէտ և
մասձմունքի մէջ էր ընկղմած, սակայն
երբեմն առ երբեմն ժպտալով ձեսքերը
թափ էր տալիս:

— Ես իսկի ոչ թագ կը կենամ և ոչ
կը վախէմ ձեզ պէս, ես ուզում եմ
գնալ տեսնել ինչպէս են կուռմ պատե-
րազմի մէջ և էզուց ինչպիելու եմ առ
պուց, որ ինձ իւր հետ ասնի Մերուժա-
նի դէմ:

— Ամա անխելք ես համ, մէջ մտաւ
Արշակը, հէնց գու էիր պակաս կոռի
մէջ, այնպէս կըհասցնեն գլխիդ, որ ծըպ-

առցի անգամ չի դուրս գալ դու կար-
ծում ես որ պատերազմը մեր խաղերի
նման բան է: Մէկ էլ հոգս մի քաշել
ապին քեզ չի տանի իւր հետ:

Այս խօսքերի վրայ Արտաւազզը աւելի
ամրապնդուեցաւ իւր մտադրութեան մէջ
և աւելի պարզ սկսեց խօսել:

— Դուք ինչ ուղում էք ասացէք, բայց
ես էլի գնալու եմպատերազմ, որովհետեւ
ես սիրում եմ հայրենիքը, չեմ կամենում,
որ նա ոտնակոխ լինի թշամուց: Ո՞րն
է լաւ, թողնենք արդեօք, որ պարսիկնե-
րը նեղեն մեր հայ ազգին, ստիպեն
նրան ուրանալ կուսարչի ու հաւատը,
թէ գնանք քաջի պէս կռուենք, արիւն
թափենք և չթողնենք, որ մեր հայրենիքը
քանդեն անհաւատները: Զէ՛, ես ձեզ
պէս վախկոտ չեմ, ես կրցնամ, կրկուռեմ:
Այս ասելով նա հեռացաւ ելիու

եղքօր մօտից և գնաց դէպի իրանց սունը:
Արտաւազզը թէպէտ և չյայտնեց
իւր միաքը ծնողներին, սակայն մայրը
շատ շուտ նկատեց, որ իւր երեխան
փոխուել է և մտածումէ մի բանի վեցի:
— Իո հիւանդ չես, որդիս, գարձաւ
մայրը Արտաւազզին, ի՞նչ բանի էլիք
մինչեւ այժմ ինչու չեկար ժամանակին
հայ ուտելու:

— Աղջի նաթեր, գարձաւ նա նամիշտ-
ներից մէկին, տար երեխին հաց տուր,
զլուխը սառը ջրով ասաւ լուանան, երե-
խաս հիւանդ է:

— Իսկի ոչ հիւանդ եմ, ոչ էլ քաղցած,
կտրեց Արտաւազզը իր մօր խօսքերը:

Այդ զիշեր Արտաւազզը քնի մէջ
անգաղար խօսում էր և կրկնում այն
ամէնը, ինչ որ իւր մտքում վճռել էր կա-
տարել Երբէք մայրը չեր լսել որ իւր

որդին երազում այսքան խօսէր: Ասած
խօսքերի մէջ աւելի շատ կրինւում: Էին
չետևեալ բաները. վախի՛ր, մեռի՛ր, Մե-
րուժան, տե՛ս, եկայ, յաղթեցի, կեցցես
Յղտաւագդ:

Միւս օրը Մանուէլ սպարապետը
պէտք է յարձակուէր պարսից վրայ: Այն
ժամանակներում հայերի մէջ մի յաւ
սովորութիւն կար, այն է նախ քան պա-
տերազմ սկսելը ուխտ էին անում, մա-
տադ անում մի որ և է սրբի, որ զօր-
քին մօտ էր գտնուում: Հէնց բազուանում
որտեղ կենում էր Մանուէլը, գտնում
էր մի փոքր բայց շըեղ մատուոի մէջ
սուրբ Յոդհաննու ոսկորները: տարին մի
քանի անգամ մօտակայ քաղաքներից և զիւ-
ղերից ժողովուրդը գալիս էր համբուրելու
սրբի ոսկորները և ինսդրելու, որ իրանց
ցաւերին դարման անի: Սպարապետը հրա-

մայել էր նախքան պատերազմ սկսելը, որ
ինչպէս իւր բոլոր պալատականները նոյն-
պէս և ամբողջ զօրքը դայ ուխտ անէ
և ապա սկսի գործը: Մատուռը մատ-
նախ Մանուէլը իւր երկու հասակաւոր
որդիերանց և վաչէի հետ, ապա թա-
գուհի Զարմանդուխտը Մանուէլի հնոջ
ամիկին Վարդանուշի հետ, սրանց հետ էին
նոյնպէս և երեխանները: Կանանց խմբի
ազօթովների մէջ ամենաջերմեսանդը,
ինչպէս երեսում էր, մանուկ Արտաւազդն
էր: Նա խնդրում էր ս. Յովհաննէսից, որ
իւր ապին թողնէ իրան պատերազմ գնալ
աղաչում էր, որ ս. Յովհաննէսը զօրու-
թիւն տայ իրան, թշնամուն յաղթի, պա-
տերազմից անմնաս գուրս դայ, իւր բնկեր-
ների առաջ պարծենայ, հոչակուի այնպէս,
ինչպէս հոչակուել են իր հայրերն և պա-
պերը պաշտպաներով հայրենիքը թշնա-

միների գէմ:

Երբ զինուողները դուրս էին եկել մատուռից, սպարապետը հրամայեց իր գօրքին գունդ-գունդ կանգնել պատրաստուել արշաւելու: Խսկ կանանց խումբը երեխաների հետ ուզարկեց Վարագլեռան բերդը, որ այնտեղ ապահով մնան մինչեւ պատերադմի վերջանալը: Մանուկ Արտաւազզին նոյնպէս հրամայեց, որ կանանց հետ գնայ, բայց նրան ախորժելի չէր լսել Մանուկից այդպիսի մի կարգադրութիւն:

— Ապի՛, գարձաւ Արդաւազզը նրան, թող ինձ գնամհօրս հետ պատերազմ ես էլ կամենում եմքո որդիների նման գնալ կրուել թշնամու գէմ:

Մանուկը առաջին անգամ մանուկի խօսքերը լսելով, ժպտաց և ասաց:

— Կեռ քո պատերազմ գնալու ժամանակը չէ, որդիս, իմ որդիքը քեզանից

շատ մեծ են, նրանք քո ընկերը չեն, տեսնում ես ինչպէս խելօք են քո ընկերները, Արշակը և Վաղարշակը, նրանք անխօս գնում են, դու էլ գնա նրանց հետ միասին:

Արտաւազզը նորից ու նորից կրկնում էր, որ չէ կամենում կանանց հետ գնալ, — նրան համոզիլու հնար ըլիար: Սպարապետը, որին զօրքը սպասում էր պատրաստի, սկսեց զայրանալ մանուկի վրայ ե վերջը բարկութիւնն այն կէտի էր հասել որ ձեռքի մտրակով սկսեց չարաչար կերպով ծեծել նրա ածելած զլուխը: Այդ ժամանակ սովորութիւն կար, որ երեխաների զլուխը կեր էին անում և միայն կատարին մի փուջ մաղ թողնումի որ առաւում էր ցցունք (քեաքուլ): Գժուար զրութեան մէջ էր ընկել խեղձ մանուկը. մի կողմից սպարապետը ծեծում էր նրան,

միւս կողմից ամենքն էլ համոզում էին,
որ նա լսէ իւր ապուն: Նա ակամայ մի
քանի քայլ արեց գեղի այն կողմը, ուր
գտնում էր կանանց և երեխաների խում-
բը, կարծես թէ նա համոզուած էր, որ
պէտք է գնալ այնաեղ, ուր առում էն, զո-
նէ այնպէս էր երեսում ամէն մէկին:

Դ

Արեգակը կէս օրն էր ցոյց տալիս, բայց
նևս ճառագայթները չէին տալիս այն տա-
քութիւնը, որ պէտք էր սպասել մանր ամ-
պերը անդադար գնում էին զալիս ծած-
կում նրա երեսը. Հետու սարերի վրայ, որ-
աեղից գալիս էր նփրատ գետը, երեսում
էր որ անձրեւ է գալիս, կայծակը չեռուից
պաղղին էր տալիս, թէպէտ և որոտումի
ձայնը չէր լսւում: Դետի ջուրը մի փոքր
պղտորուել էր, Հիւսիսային կողմից վշում
էր պաղ քամին, թռչունները միայն երբե-

մըն երբէմն երեսում էին օդի մէջ, միքանի
անզամ չըթչիթացնում, ծլվում և խսկըն
անչետանում: Միջաներն անչետացել
էին: Սակայն քանի սահում էր ժամանա-
կը, այնքան ևս բայցում էր արեգակի գու-
նաս դէմքը:

Այսպիսի մի ժամանակ էր, որ Հայոց զօր-
քը երանց վիանների առաջ պատրաստ,
կազմուած սպասում էր իւր քաջ սպարա-
պետի հրամանին: Համարեա բոլորի երես-
ների վրայ վստահութեան և ուրախու-
թեան նշաններ էին երեսում: Պալախց զօր-
քը որին կարողանում էին անմել հայերը
երեփուայ տեղումն էր մնացել երեկի մի եր-
կու օրուայ հանգստանալու մասվարութիւն
ունէր Մերուժանը: Սակայն այսօր նաևնց
մէջ շարժում էր երեսում՝ սպարպիկները
իմացել էին Հայոց սպարաւետի մատրու-
թիւնը:

Մանուկլը երևեցաւ իւր զօրքին. «Կեց-
յե՛ս մեր քաջ զօրսավար, կեցցէ սպարտ-
պետ» — թհրաց օդը տմենայն կողմից:
Սպարտապետն ունէր երկար հասակ և
վայելակաղմ իրան, դիւրեկան և վստահ
գէմք, նա զինուած էր ոտից սկսած մին-
չև զուխը իւր զօրքը և ժողովուրդը
Մանուկլին նմանեցնում էր անսուիկ քար-
ձըր լեռան, երբ նա հագած էր լինում
զինուորական զգեստ և հեծած իւր նժոյզի
վրայ: Սպարտապետին ուղեկցում էին իւր
մշտական նիզակակից Սիւնեաց իշխաննե-
րի զիստորը, Բարիկը, և ապա հինգ թիկ-
նապահ: Նրա առաջ կանգնած էր 35 հա-
զար զօրք, որից 20 հազարը հետեւակ էր,
իսկ 15 հազարը հեծելազօր (Ճիաւորներ):
Նա դարձաւ այդ բազմութեան և ասաց.
— «Իմքած զինուորներ, տեսէք, մատնա-
ցցից արեց նա Պարաիկների վրայ, այնու-

տեղ ձեր առաջ կանգնած են թշնամինե-
րը, որոնց առաջնորդում է Մերուժանը,
մի հաւատափոխ հայ, որի մեր երկիրին
հասցրած անթիւչարիքները և հաղածանք-
ները ձեղ ահա մի քանի տարի է որ
քաջ յայտնի են: Այդ մարդը, որ մեծացել
է մեր երկրում, քրիստոնէական սուրբ
հաւատի մէջ, ծծել է մեզ հետ Հայաստա-
նի զովարար օդը, խմել նրա մեղրաշամ
ազբերների ջրից, այժմ կամենում է մեր
երկիրը Պարսից գոռող Շապուհ թագա-
ւորի ձեռքը ձգել և կռապաշտութիւն
տարածել մեր երկրում: Միթէ հայերը կա-
լող են տանել կռապաշտ Մերուժանի կա-
ռավարութիւնը, որին Շապուհը խոստա-
ցել է մեր երկրի վրայ թագաւոր կարգել:
Զգաստացեք, արթուն կացէք: Շատ անզամ
յաղթել ենք պարսից զօրավարներին և
նոյն իսկ այդ Մերուժանին, յուսով եմ

որ այժմն էլ նոյնպէս յաղթող կրհանդի-
սանանք, կազմտուենք փողձանքից, — բայց
այդ բոլորը ձեր բառուկների զօրութեւնի-
ցըն է կախուած, եթէ կամենաք, կը յաղ-
թենք, եթէ չէ, կը մասնուինք թշնամու-
ձեռքը, կը կորցնենք այն ամէնը, ինչ որ
ունենք: Գերի կը սնայ թշնամուն ասաւա-
ծապաշտհայ ժողովուրդը, սրի կերակուր
կրգառնան մեր որդիքն ու կանայքը, պարս-
կասանի բանակերում կրգթեն մեր Հո-
գեստականները, մենք ինքներս կը պիտա-
տուինք անօրէն Մերուժանի Հրամանավ:
Արիացէք, քաջեր:

Մահից մի վախենաք, այդ ձեր բոլոր
յշար զրէք Ասուծոյ վնայ, որովհետեւ
առանց նրան հրամանին ոչինչ չէ լինում:
Մեռնել ասաւածապաշտ ժողովրդի հա-
մար նշանակում է ժառանգել երկնքի
արքայութիւնը:

Դեռ սպարապետը չէր վերջացրել իր
խօսքը, որ յուղուած զօրքի մէջ այստեղ
և այնաեղ սկսեցին լսուել բացականցու-
թիւններ, «Պատրաստ ենք մեռնելու ե-
կեղեցու և հայրենիքի փրկութեան հա-
մար, անկցի Մերուժան, Աստուծոյ օդ-
նութիւնը մեզ հետ է, կեցցես մեծ սպա-
րապետ և տէր աշխարհի»:

«Յառաջ» — լսուեցաւ այս աղաղակնե-
րի մէջ Մանուելի ձայնը և ամբողջ զօրքը
շարժուելով տեղեց զիմեց զէպի պարսիկ-
ները: Հնչեցին պատերազմական փողերը,
բարձրացան փայլուն դրօշները և մի ժա-
մկց արդէն երկու կողմի զօրքն ևս մի-
մեանց էին խառնուել:

Մանուել սպարապետը իւր նիզակակից
Բարիէնի հետ յարձակուեցաւ թշնամու-
ած թերի վրայ, ուր նրան կարծիքով պէտք
է լինէր ինքը Մերուժանը: Այս վերջինը

մինչեւ պատերազմի սկսելը բողոքովին իր կիւղ չէր կրում հայոց սպարապետից, բայց տեսնելով նրա անսպասելի յարձակումը, սիրտը վախ ընկաւ և, որպէս զի շմառնուի Մանուկին, խորամանկութիւն գործ գրեց, որ իրան ջնանաչեն կոռուի ժամանակ: Նա վեր առաւ իւր զարդերի, սառ զաւարդի և իրան ունեցած յատուի նըշանների նմանները հագցրեց շատերի վրայ, իսկ ինքը հասարակ զենուորի հակուստ գեցաւ, — կամենում էր սրանով իր անձնաւորութիւնը թագցնել Մանուկինց, որ շատ լաւ ճանաչում էր նրան: Երբ երկու կողմի գնդերը միմեանց զարնուեցան, Մանուկը սպարապետը փարաղի նման Պարսից աջ թեի մէջ մտաւ և սկսեց սպանել զիսաւորապէս նրանց, որոնք իրանց վրայ ունէին Մերուժանի նշանները. և նա ամենայն անդամ երբ զլուում սպանում էր

դրանցից, այնպէս էր կարծում թէ Մերուժանին է սպանում, սակայն երբ Համոզւում էր որ նո չէ, զարմանուում էր և չէր իմանում ինչ անի: Վերջը կանչերով իւր նիդակակից Բարփէնին, ասաց:

— Պ Տեսնում ես ինչպէս է խարուժմեղ Մերուժանը բայց ես նրա մի ուրիշ նշանն էլ զիտեմ, նա ձեռ վրայ այնպէս բարձր է նատում, որ թամբի ու ոտների մէջ միշտ արձակ տեղ է մնում, եկ այժմ շարունակեց Մանուկը այդ նշանի վրայ ու շաղը թիւն զարձնենք, զուցէ զրանով զանենք անօրէնին: Երկուսն ել ոյդ նշանով շուտով ճանաչեցին Մերուժանին, թէպէտ նա իւր ուրիշ նշանները չունէր վրան:

Մանուկը Մերուժանին տեսներով տապաց, Առաջ եկ, այ դու կախարդ, մինչեւ երբ պէտք է մեղ խարես, խորամանի

ազուէս, քո պատճառով շատերն ընկան
ձեռքիս տակ, այժմ մենք լաւ ճանաչե-
ցինք քեզ, ազատուելու գուռ չունես,
որովհետեւ այսօր Տէր-Աստուածը քո գոր-
ծած բոլոր չարիքը քո վիսին է թափելու:
Մերուժանը, երբ այս խօսքերը լսեց, ա-
ռաջ գուրս եկաւ, բարձրացնելով իւրնի-
ղակը, երկու ձիաւորներն էլ այնպէս զար-
նուեցան իրար, որ երկուսն էլ ձիուց
վայր ընկան և ոչ մէկը չյաղթուեցաւ,
որովհետեւ երկուսն էլ հաւասար զօրեղ
էին: Բարկէնը տեսնելով իւր տիրոջ և
Մերուժանի ձիուց ընկնելը, իսկոյն վրայ
հասաւ և սկսեց նիզակով հասցնել Մե-
րուժանի կողքերին, բայց ոչինչ չկարո-
ղացաւ աներ այն ժամանակ թիկնապահ-
ները բարձրացրին Մանուէլին կրկին ձիու
վրայ և կարեցին Մերուժանի զլուխը
Պարսիկները լսելով իրանց զօրավարի

մահուան լուրջ ետ քաշուեցան և սկսե-
ցին փախչել:

Ե

Մանուէլ սպարապեաը իւր հետ տա-
րել էր հեծեներին, որովհետեւ այդ զօր-
քին նա աւելի հմուտ էր կառավարելու,
Հայսց զօրքի միւս աջ թերյանձնուած
էր Վաչէին, այստեղ գտնուում էր հետե-
ւակ զօրքը, որի մէջ ամենազլիսաւոր տեղն
էին բռնում աղեղնաւորները: Այս թերի
մէջ բոլորի, անգամ թշնամիների, ուշըն
ու միտքը դարձրած էր մէկ անձնաւորու-
թեան վրայ, որ կարծես միայնակ կենդա-
նութիւն էր տալիս այդ թերի ամբողջ
գնդին, նա իրեւ մի լուսատու աստղ փայ-
լում էր զօրքի մէջ, նրա ոգեւորութիւնը
ջերմութիւն պէս տարածւում էր անդա-
դար զօրականների մէջ: Նայողը այդ ան-
ձին 15 տարեկանից աւել չէր տալ նա

ո՞ներ վոքրիկ բայց ձեռւն և վայելուց
հասակ, չքնաղ պայծառ և գուարթ ե-
րես, սքանչելի, վառվառւն և թափանցող
աչքեր, այս մանուկի զիսին վայըտմ էր
պղնձէ թեաւոր սաղաւարդը բարսի եր
կամէ գրահր պաշտապանում էր նրա մատ
ապա կուբծը առները և կռները ապա-
հոված էին հիւսած երկաթով, արծովի
գոտուց կախած էր նախ մի փօքը առւր
և ապա աջ կողքից ոսկեզօծ կապարձ
ովք երեսմ էին բազմաթիւ բարսի պր-
զովաակ նետեր, ձախ ձեւքին բանածու-
ներ մի զեղեցկագործ աղեզ, սրբ վրաց
մօտից նայողը կրտեսնէլ փոքը քանդա-
կած նկարներ և գանագան պատթիւները
զբանց մջ տերի աչքեր էին ընկնում
ու Տեր օդինեա ինձ և ապա դրան եռերց
մջ տեղը Ա. և Վ. տառերը Մանուկի
զենքերից ամենամեծ հոգար դարձում էր

ինչպէս երեսում էր, աղեղի, կտպարձի և
նետերի վրայ: Աւ արդարեւ, մանուկը
պատերազմում զործ էր ածում միայն
նետն ու աղեղը և երեսում էր, որ շատ
վարժուած է նետաձութեամբ: Երա
թշնամու վրայ արձակած նետերից ոչ
մէկը իզուր չէր անցնում, ամենայն մէկ
նետ մէկ պարսիկ էր վորում: Մերուժա-
նի գրօշակակիրներից մէկը երբ տեսաւ
այս մանուկին պատերազմի ամենասար
ժամանակ, սկսեց ծիծաղեր ծազրել նր-
րան և, փաթաթելով զրօշը նիզակին
յարձակուեց նրա վրայ, կամենալով տեղն
ու աեղը սպանել նրան: Բայց նա ծա-
նօթ չէր նրա ոյժին: Ոյզ կայտառ և զե-
ղեցիկ մանուկը այս անգամ այնպէս պինդ
լորեց աղեղը և նետը թողեց նրա վրայ,
որ նետը վզզալով վնաց անցաւ ոյդ պարա-
կի վորի միջով, իզուր զետնի մէջ:

Պարսիկը վայր ընկաւ, բայց կենդանի
մնաց: Թշնամին այստեղ էլ էր յաղթւում,
մննուկը առաւել և առաւել սկսեց ոգե-
ւորուել և վեր առնելով մի նիզակ սկսեց
նրանով կոտորել փախչող թշնամուն:
Ամէն տեղ պարսիկները յաղթուել էին
և սրի կերակուր դարձել, դրանցից մի-
այն մի քանիսները կարողացան ազատու-
ել փախչելով: Թշնամիները շփոթուեցան
մանաւանդ այն ժամանակ, երբ դրանց
մէջ տարածուեցաւ իրանց զօրափարի
զլիատման լուրը: Արդէն մութն ընկնելու
վրայ էր, երբ հայ քաջերը դադարեցրին
իրանց կոտորածը սպարապետի հրամա-
նով:

Երբ յետոյ սկսեցին բոլորեքեան հաւա-
քուել Մանուէլի շուրջը, տեսան, որ Վա-
չէն չկայ, ման եկան և տեսան նրան խրու-
ած ձահճի մէջ Եփրատ գետի ափին.

Բարձրացրին նրան, բայց նա կենդանի չէր:
Զօրականները լսցով բերին նրա դիակը և
դրին Մանուէլի վրանի մէջ, որ տեսնելով
նրան արտասուեցաւ:*)

Բայց ով էր արգեօք այն կորովի մա-
նուկը, որին մենք տեսանք պատերազմի
մէջ,—դա մեր Արտաւազդ մանուէն էր:
Նա միայն երեսանց ցցյ տուեց սպարա-
պետին, երբ նա ծեծում և ստիպումէր
նրան հետեւել կանանց, թէ գնաց նրանց
հետ, սակայն երբ փողի ձայնը լսեց, չհամ-
բերեց և գաղանի կերպով զինաւորուեցաւ,
մասւ պատերազմը այդ բանի մասին ոչ ոք
չէր իմանում, անգամ իւր հայրը, թէպէտ

*)Այս պատմութեան նիւթը առած է Փ. Բիւ-
զանդից: Ա. Խորենացու պատմելով Մերուժանը
սպանուումէ Զիրաւ գաշտի պատերազմում Մկաստ
Բագրատունաւ ձեռքով, Պապ թագաւորի ժամա-
նակ:

նրա գնդումն էր կուռում:

Միւս օրը բերդից իջան կանայքը երբ նրանք հեռուից տեսան Մերուժանի կը ուրած զլուխը, կոծ ու յաց բարձրացրին, կարծելով թէ դա իրանց ծանօթ Սամուելի իշխանի զլուխն է, որովհետեւ այդ երկուսը իրար նման էին: Բայց երբ մօտեցան, նոր հանդարակեցին և իմացան, որ դա անիծեալ Մերուժանի զլուխն է: Յետոյ բերին Վաչէ իշխանի զիակը, որի վրայ կանայք սկսեցին սուզ անել և ապա ամբողջ զօրքի ներկայութեամբ պատարագ մատուցանելով, մեծ պատուով ու շբով թաղեցին նրան ո, Յովհաննու մատուսի կշանին: Նթէ մի կողմից մեծամեծները և բոլոր հանդիսականները տիրել էին Վաչէի մահուան առթով, միւս կողմից ուրախանում էին, նայելով նրաքաջ Արտաւագդ որդու վրայ, որի արածքաջազործութիւն-

ների լուրին արդէն ամենքը զիակին: Ամենքըն ուզում էին աեսնել այն պարսկին, որին նետահարել էր մանուկ Արտաւագդը: Նրանք ապշած նայում էին պարսկի վրայ և զարմանում թէ ինչպէս նա կենդանի էր միացել: Եյս առաջին անգամն էր, որ Արտաւագդը իւր մանուկ հասակում մասւ պատերազմ և այգպէս յաջողութիւնունեցաւ կուուի մէջ: Բոլորը թէ մ.ձ և թէ փոքր նախանձում էին Արտաւագդին, նա մանաւանդ նրա երկու ընկեր Արշակ և Վաղարշակը որոնք շատ ափառում էին թէ ի՞նչու իրանք էլ չպնացին պատերազմելու:

Մանուկն սպարապեալ երբ տեսաւ մանուկին, երկը անգամ համբուրեց նրան և շփեց զլուխը, յետոյ կանչեց արքայազուն Արշակին և առաց, — « Կուք երկուագ եմ որդիքս էք, երկսիդ էլ հաւասար սի-

բում եմ: Դու, դարձաւ նա Արշակին, երբ
կըդառնաս Հայտատանի վրայ թագա-
ւոր, չմոռանաս քո ընկեր Արտաւազդին,
սիրիր նրան այնպէս, ինչպէս ես ձեզ սի-
րում եմ և օգնական շնչիր քեզնրան Իսկ
դու, Արտաւազդ, ինչպէս քաջութեամբ
սկսեցիր քո գործը այնպէս էլ շարունա-
կիր, արիւն թափիր միշտ ազգի և եկե-
ղեցու փրկութեան համար, բարձր պահիր
Մամիկոնեանների անունը միւս իշխաննե-
րի և նախարարների առաջ: Սիրի՛ր ու-
սումը, Հայ ժողովուրդը և նրա սուրբ
Հաւատը:

Երեք տարուց յետոյ Արտաւազդը պը-
սակուեց Մանուկի նիզակակից Բաբեն
Սիւնեաց իշխանի Վարդենիկ դստերհիւտ,
որին նա դեռ պատերազմից առաջ սի-
րում էր: Վարդենիկը, որ սկզբում անտար-
բեր էր դէպի Արտաւազդը, կոռից յե-

տոյ սիրեց նրան: լսելով նրա արած քա-
ջագործութիւնները:

Անցան շատ տարիներ. Արտաւազդը գար-
ձաւ սպարապետ ամբողջ զօրքի վրայ, ժա-
ռանգեց մեծ անուն, փառք և պատիւ բո-
լորի առաջ, բայց հասարակ ժողովուրդը
նրան գեռ մանուկ Արտաւազդ էր անուա-
նում, իսկ երեխաններն ու աշուղները եր-
դում էին.

Մեծ զօրավար Մանուկը
Ծեծեց զբուխ մանուկի,
Ասաց, գնա՞լ մի պատերազմ,
Կուլ կը գնաս դու պարսկի:
Բայց Արտաւազդ քաջարի
Փախաւ, մըտաւ կըռուի մէջ,
Զարդեց, փշրեց թշնամուն,
Դարձաւ մանուկ մէծանուն:



առ հոգու ամբ խցիք անոց զերս առ
առ պատճենի անընդունակ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ

Иванъ II Красный 63

off mālār of māpp yd 688
depryvātūr off pārly spāll
mālār, tār mālār off lāst
lāst, spāll, mālār, off lāst

ՀՀ Ազգային գրադարան



NL0596249

ՀՀ Ազգային գրադարան



NL0596245

